



ՀՆՁՊԱԿ

ՄԻՋՈՑՆԵՐ

«Հնչակի» նախնթաց համարի ստաճնորդողով մենք յայտնեցինք այն միտքը, որ յեղափոխութիւնն անելու և աջող ել.ք ունենալու համար անհրաժեշտ պայմանն է զազանի յեղափոխական կազմակերպութիւն, գործունէութեան նպատակայարմար ու զարգացած ծրագրով և բազկացած գիտակցական, համոզված յեղափոխականներից, որոնք պէտք է մղեն պատերազմ ընդհանուր թշնամու՝ թիւրք կառավարութեան դէմ: Բայց արդեօր որոնք պէտք է լինեն այդ գործունէութեան միջոցները: Մենք այժմ կ'ստանանք այդ միջոցների ստաճին կարգի մասին:

Արդէս գլխաւոր միջոցներ յեղափոխական ոյժերի կազմակերպութեան համար, յեղափոխականի գործունէութեան ստաճին քայլը պիտի լինի՝ յեղափոխական պրօպագանդա, ազխտայիւս և հիմնել յեղափոխական կազմակերպութիւններ ժողովրդային շրջաններում: Գրանց նպատակն է հասարակութեան, ժողովրդի բոլոր շրջաններում պատրաստել հաստատ հոլ 1) յեղափոխութիւն անելու համար և 2) ոչ միայն զբաւել ժողովրդի, հասարակութեան համակրութիւնը զէպի յեղափոխական գիտակցական գործող փորձամանութիւնն, այլ և վստահել նրանց աջակցութիւնն այդ գործունէութեան մէջ և ջանալ երկրում ընդարձակել ու ընդհանրացնել յեղափոխական, ապստամբական շարժումները: Հայ բանասիրից, հայ արհեստաւորից, հայ գիւղացուց սկսած մինչև հայ ինտելիգէնտն՝ ամենքը մի և նոյն ցանկութիւնն ունենն — սոցաւ աշխատանք, անտեսական ու արևարտական ստաջակցութիւն, հասարակական զարգացում, ուրիշ խօսքով՝ հայութեան փրկութիւն ու հայրենիքի ազատութիւն: Սակայն բաւական չէ միայն ունենալ ցանկութիւն. հարկաւոր է այդ ցանկութիւնն արայայտել նպատակայարմար գործունէութեան մէջ: Ահա հէնց այդ քայլն անելու համար բաւականաչափ պատրաստ չէ և կամ բաւականաչափ համարձակութիւն չունի հայ ժողովուրդը, հայ հասարակութիւնը: Եւ այն մարդիկ, որոնք համոզված են, որ այդ ցանկութիւնն իրագործելու նպատակայարմար գործունէութիւնը յեղափոխութիւնն է, յեղափոխականները, պէտք է իրենց համոզման համեմատ զոյն գործունէութեան համար պատրաստեն և համարձակութիւն աստիճաններ հայ ժողովրդին հայ հասարակութեանը:

Այսպէս՝ յեղափոխական պրօպագանդիստի, ազխտա-

տատօրի և կազմակերպողի (organisateur) զերերը միանգամայն անհրաժեշտ են և՛ ինտելիգէնցիայի և՛ ժողովրդի մէջ:

Յեղափոխական պրօպագանդայի մի կերպով՝ սպառնական խօսքն է, զբական ձեն է, որ յայտնվում է բացող կենդանի գործի ստաբիլիզի դաները: Բայց աստեղ ու չառագովել յեղափոխական գործունէութեան հիմնապատճառները, նրա նշանակութիւնը, նրա իմաստը, նրա կարևորութիւնն ու օգուտը, նրան իրագործելու կերպերը և այն յետագայ հասարակական կազմակերպութեան ըզձուլի կերպերը, որոնց համար էապէս և պէտք է անել յեղափոխութիւնը — դա յեղափոխական տրպագրական խօսքի զերն ու պարտքն է: Նոյն զերն է կատարում արդէն պրակտիկական հոլի վրայ և պրօպագանդայի երկրորդ կերպով՝ կենդանի, բերանացի խօսքը, որպէս ինտելիգէնցիայի, նոյնպէս և ժողովրդի շըջաններում:

Յեղափոխական ազխտատօրը, մտած ժողովրդի մէջ, պէտք է ջանայ վերականգնել նրա անկած ողին, պէտք է նրան զրգոէ թշնամու դէմ՝ օգուտ քաղելով սրա ամեն մի ծնչումից, պէտք է զրգէ ժողովրդին հարկածողովի ժամանակ մերժել արկ հաստացանելը, կառավարութեան և ուրիշ թշնամիների աչքի ընկնող բռնութեան, հարստահարութեան ժամանակ բողոքել և ոչ միայն խօսքով, այլ և գործով, և այդպիսով՝ ընդհանուր շփոթութիւն ու յուզում՝ յարացանելու օգուտելով ժողովրդի զոյն տրամադրութեամբ, ուղղել նրա ոյժերը թշնամու դէմ: Յեղափոխական ազխտատօրը պէտք է լինի ժողովրդի համար նոյն բանը, ինչ որ մի կայծն է չոր խափի համար:

Յեղափոխական կազմակերպողի զերն է՝ ժողովրդային շրջաններում հիմնել զազանի յեղափոխական, ապստամբական կազմակերպութիւններ, կանոնաւորելով նրանց յայտնի կարգապահութեան մէջ և հասցնելով նրանց դէպերի պաշար:

Յեղափոխական գործունէութեան աջողութեան համար յեղափոխական պրօպագանդիստը, ազխտատօրն ու կազմակերպողը պէտք է զլխտատրապէս գործ ունենան հայութեան (վերջին երկուսը ժողովրդի, իսկ ստաճինը և ժողովրդի և՛ ինտելիգէնցիայի) այնպիսի տարրերի հետ, որոնք ընդունակ են միւսներից շուտ ըմբռնել յեղափոխական գործունէութեան անհրաժեշտութիւնը և կարող են նրան գործադրել: Այդպիսի տարրեր հայութեան մէջ՝ 1) ինտելիգէնտ երիտասարդութիւնն է, որ, իբրև

ընդունակ իւրացնելու նոր, առաջադէմ ուղղութիւն ու ձգտումներ, յափշտակվելու մեծ նպատակով կյայտնով գիտակցական յեղափոխական և 2) զիւղացիները, իբրև իր դրութիւնից ամենաանբուական տարր ժողովրդի մէջ, հետեւաբար և միասնից առաւել հակամէտ պատերազմելու իր բարբոթութեան համար: Այդ երկու տարրերը պէտք է միացած լինեն մէկ ընդհանուր ասպարիզի վրայ, պէտք է մղեն մէկ ընդհանուր պատերազմ վե՛ն նպատակին հասնելու համար:

Վիտակցական յեղափոխականի գործունէութիւնը թիւրքաց Հայաստանում ժողովրդի մէջ կունենայ ամենազըռուաբին խոչնդոտներ. նախ՝ նա գաղտնի գործունէութիւն է, երկրորդ՝ նա կհաւաքովէ կառավարութեան կողմից՝ ներքին թշնամիներն ու խաւարամիտների աջակցութեամբ հանդերձ. բացի այդ, իր առաջին քայլերում յեղափոխականը նոյն իրեն ժողովրդի մէջ ընդգիւմնադրութեան կհանդիպէ: Բայց այդ ամենը յեղափոխականը պէտք է կրելով իր կրծքում սուրբ հաւատ գէպի իր մեծ նպատակը և միշտ վառ ու քաջ ետանդ իր ազատիչ գործունէութեան մէջ: Տոկուն ու համարձակ կերպով նա կախաստէ յեղափոխական ասպարիզում, կանխապէս գիտնալով որ հայութեան ողջ ազնիւ, խոհուն, զարգացած տարրը նրա պաշտպանն է, նրա աջակիցն է այն տատակոտ ասպարիզում, որ նա, զոհելով ընկեր, բարեկամ, ծնող, իր անձը, սեփական կամբով ու համոզումով ընտրել է իր հասարակական գործունէութեան համար, յանուն հանրական բարօրութեան, յանուն ազատութեան հայրենիքի ու ժողովրդի ստրկութեան անարգ լծից:



ԲԱՅՅԻ

Չէի՛նք սպասում... յանկարծ գլորվեցաւ վաթսունամեայ պաղատու ընկուզներին...

Այս Բաֆֆին իր անունը յանձնեց պատմութեան Նախնին անձամբ չբացաւ մեր միջից, որ այնուհետեւ բարձր պատուանդանի վրայ յարութիւն առած տեսներ նրա կերպարանքը: Հայոց գրականութեան մէջ կարմիր ծապաւենով ձգուող նրա աշխատութիւնները հայութեան համար բացում են նոր ճանապարհ գէպի առաջադիմութիւն, ճանապարհ, որ հայութեան համար ազրիւր է նոր կեանքի, հանրական բարօրութեան: Այ՛, գլխաւորաբար Բաֆֆի-գրագէտին շէ, որ մենք ողբում ենք. այլ մենք ողբում ենք այն զօրութեան, որ թուրամորթ ու անգործ հայերի անողոր զանն էր, որ հայութեան թարմ ոյժերի կանչողն ու ուղղիցողն էր: Անէք ողբում ենք տաղանդաւոր ջատագովին ընկձված ժողովրդի մարդկային ու բազարացու իրաւունքների, տաղանդաւոր քարոզչին ազատութեան գաղափարի Մենք ողբում ենք նշանաւոր քա-

ղարացուն, որի հասարակական գործունէութեան նպատակն էր. — դուրս հանել հայերին ետանդ անչարժութիւնից, առաջացնել նրանց կենդանի գործի, վե՛ն սպասերազմի ասպարէզ և յեղափոխութեան կանթեղը ձեռին՝ արիւնի գնով մարքել, հարթել ճանապարհ գէպի հայ ժողովրդի հանգիտքը, բազուն ու բարօրութիւնը. — մենք ողբում ենք Բաֆֆին իբրև ազատութեան ու յեղափոխութեան գաղափարների նշանաւոր պրօպագանդիստի...

Չէի՛նք սպասում... աւանդ յանկարծ գլորվեցաւ վաթսունամեայ պաղատու ընկուզներին...

ՄԱՏՆԵԱՅՐԻՑԻՆ

ԻՍԿ ԵՐԻ ԿԳԱՅ ԳՈՐԾԻ ՕՐԸ

«Այս դասն ժամանակ այլ ինչ սե քընար. Բնար է հարկաւոր կարծի՛ ձեռքին, Արինն ու կըրանի թշնամու վերայ, — Այս պիտի լինի խորհուրդ մեր կեանքին»

Մ. Նալբանդեանց

«Հարտացիր, հարտացիր, սի՛ մարդ, քո բարձր կոչումով. — կեանքը գործել է նըշանակում, իսկ գործելը պատերազմ է. յադթիր հասկանութիւնը, զոհիր ամեն բան բարեկամի, հայրենիքի, մարդկութեան բարօրութեան համար: Առանց պատերազմի չկայ ծապարթիւն, առանց ծառայութեան չկայ վարձատրութիւն, իսկ շարժելը կեանք չէ՛:»

Վ. Բելլինսկի

Հայոց գրականութեան ասպարիզից անյայտացաւ մէկ ակնաւոր անձնաւորութիւն — Բաֆֆին: Այն դասարկութիւնը, որ նա թողնում է իր ետից, առայժմ լցնող չկայ: Եւ մինչև որ նրան չփոխարինէ մէկ ուրիշը, նրա կարուստը շատ զգալի կլինի հայերին: Եր կերպարամեայ գրական գործունէութեան շարիք ձգվելով Մ. Նալբանդեանցի օրերից մինչև այժմ, շատ հասարակական խնդիրներ է հանդիպել, որոնք չեն խոտարի նրա տեսութիւնից: Նա պատկանում է գրագների այն տիպին, որ միանգամայն իր գրուածքներում չօգտւում է խնդիրների մէկ անդող շարք, ջանալով նրանց լուծել, որքան այդ ներում է իր առաջնորդ ընդարձակութիւնը, ոյժը թէ արդեօք Բաֆֆին որքան տնորվեց բացատրելու լուծել բոլոր խնդիրները, որ նա չօտարի է իր գրուածքներում — զա մանրամասն խզմնատուր քննադատութեան գործն է և այս համեմատաբար կարճ յօդուածում անհր նարին է այդ աշխատութիւնն իրագործելը: Մակայն մենք արդէն այստեղ մտադիր չենք քննադատել Բաֆֆիի գրական գործունէութիւնը, այլ միայն կանգ կառնենք վիպասանի շօտափած մի շարք խնդիրներից այն խնդրի վրայ, որը նրա ուշագրութիւնն ամենից շատ է գրաւել, նրա ուսումնասիրութեան աւելի ենթարկվել, և ոչ միայն այդ, այլ նրա գրական գործունէութեան ամենազգլխաւոր հօդան է եղել:

Բաֆֆին, ինչպէս և ուրիշ մեր նշանաւոր գրողները, ա է ն դ է ն ց ի ա կ ա ն գրող է և որպէս միւսները, նա էլ գողտիւրութիւնը և մի որոշ ուղղութեան ք ա ր ո զ ի շ է: Հայոց կեանքի հասարակական պայմանները, հայ ժողովրդի գրութիւնն ու պատմական հանդամանքները մեծ ազդեցութիւն են ունեցել Բաֆֆիի տաղանդի զարգացման վրայ, որպէս և պիտի լինէր տաղանդի հետ, եթէ աւելի առջև ունենանք այն պայմանը, որ տաղանդը պէտք է լինի իր ժամանակի պահանջների արտայայտիչ: Այդ տեսակետից նայելով՝ Բաֆֆին ամբողջովին ժամանակակից հայ գրող է, տաղանդաւոր գրող նրա բոլոր անխուսափելի սակաւութիւններով և նրա բոլոր արտա- նաւորութիւններով: Նա արտայայտիչ է հայ հասարակութեան այն ձգտումների, որոնք Մ. Նալբանդեանցի քնարի լարերն են զողացրել, որոնք Չամսու Քաթիւզայի քարոզչական բանաստեղծութիւններն են արտայայտել, որոնք զրաւել են Մերկուցին նրա ձերբանկ հասարակում և որոնք Բաֆֆիին ներշնչել են ահագին հատորներ, որոնցով նրա բեղմնաւոր տաղանդը դեռ չէր յաղեցրել: Եւ այդ հիման վրայ, այսինքն իբրև տաղանդաւոր արտայայտիչ, հայ հասարակութեան ժամանակակից յայտնի ձգտումների, հայոց հասարակական զարգացման արագաց պատմարանի համար Բաֆֆիի իմաստալից հատորները հարուստ նիւթ են մատակարարում: Բայց որո՞նք են հայ հասարակութեան ժամանակակից այն ձգտումները, որոնք Բաֆֆիի աշխատութիւնների մէջ արտայայտվում ու պատկերանում են աւելի բազմակողմանի տեսակէտից, քան մեր միւս գրողները: Գրուածքներում: Գժուար է գրչի մի քանի գծով բացատրել այդ հարցը, որ կրանել է և դեռ կկրանէ բազմաթիւ հատորներ:

Ճողովուրդների կեանքը մի երկար շարք է միմեանց յաջորդող առաւել կամ պակաս օրհասական հասարակական անցքերի, իրադրութիւնների, երեւոյթների: Այդ իրադրութիւններն, այդ երեւոյթներն արդիւնք են իրենց ժամանակի հասարակական ձգտումների, պահանջների, ուրիշ խօսքով — այդ իրողութիւններն ու երեւոյթներն արտայայտութիւն են իրենց ժամանակի հասարակական ձգտումների, պահանջների: Այդ ձգտումները պահանջում են իրենց իրազօրծումը և այս պահանջի շնորհով շատ անգամ ժողովրդի հասարակական կեանքը ենթարկվում է խիստ ցնցումների, իր ձգտումները իրազօրծման հանդէպ խոչնդոտներ տեսնելով, այդ ցնցումներն էլ վերջ են տալիս այդ կեանքի որոշ կաօխային (сроче): Մի յայտնի կաօխայի կեանքը վարած՝ վերջացած, ժողովուրդը մտնում է կեանքի մի նոր շրջան, ուր նմանապէս ուսաճանում են նոր ձգտումներ, նոր պահանջներ, և ստեղծ նոր իսկ նախկին շիրազօրծված ձգտումները ստանում են նոր կերպարանք, նոր դոյն, թերազրկած հասարակական առաւել կամ պակաս հին կողմակերպութիւնից տարբեր կազմակերպութեան պայմաններով: Հասարակական ձգտումների, պահանջների զարգացումը պահանջում է հասարակական ընդհանուր կազմակերպութեան աւելի զարգացում, համապատասխան ձգտումների դար-

գացման

Ներկայում հայոց կեանքն այդպիսի սրտցելսի ենթակայ է: Հայ ժողովրդի պատմութեան մէջ, սկզբից մինչև վերջ կարմիր թելով ձգվող արտաքին պատերազմները, օտար ժողովուրդների յարձակումները հայոց երկրի վրայ՝ հայ ժողովրդին միշտ սպառնացել են օրհասական քայքայում: Այդպէս արիւնի գետը, որ հայոց պատմութեան առասպելական սկզբնաւորութիւնն իրեն աղբիւր է ունեցել, այդ օտանաակներից սկսել է հոսել հայրենի դաշտերով, անզգար մեծանալով և սպառնական կերպարանք ընդունելով հայ ժողովրդի գոյութեան վերարերութեամբ: Եւ թէ՛ յաղթական, թէ՛ սխտը հայոց պատերազմների անընդհատ շղթան, որ այնքան անգամ երկիրը մտանել է թնամիներին, ծայրահեղ տկարութեան է հասցնում հայ երկիրն ու ժողովրդին, որ Ռուսիեան թագաւորութեան անկման շնորհով վերջնականապէս ընկնում են օտար լծի տակ: Այս օրհասական հարուստ մտնապրալի ազդեցութիւնն ունեցաւ հայ ժողովրդի վրայ: Ամբողջ դարերի ընթացքում պատերազմական ամենայն տեսակ ցնցումների ենթարկվելով — պատերազմներ որոնք մղվում էին երբեմն հայութեան ու Հայաստանի անկախութեան համար, երբեմն անձնապաշտպանութեան համար, երբեմն հայոց այս կամ այն թագաւորի աշխարհատիրութեան ձգտման յազեցման համար, — ամբողջ դարերի ընթացքում, ստում ենք, պատերազմական ամենայն տեսակ ցնցումների ենթարկվելով: Ռուսիեանց թագաւորութեան անկումից յետոյ հայ ժողովուրդը բոլորովին ջարթվել ու քամվել էր: Այդ ժամանակ նա նմանում էր մի հիւանդի, որ ծանր օպերացիայի (operation) շարժանքից յետոյ ուժասպաս լինելով, գրեթէ անշունչ ու համր աւելի չուտ ընկած քան պաւակած է լինում իր անկողնու մէջ, յանձնված խիսական ձգնածամին, կենդանութեան ու մահու մէջ տատանվելով: Հայ ժողովրդի այդպիսի համրութիւնն, այդպիսի անշունչութիւնը շարունակվեցաւ մեր դարին յաջորդող այլ շորս դարու ընթացքում: Այդ հսկայ ժամանակամիջոցում հայ ժողովրդի կեանքի մէջ ամեն քան խլացել էր: Բայց մի քանի արտասովոր պատահարներից, ընդհանրապէս նա իր գոյութեան նշոյլը սքնով չէր սարսուցանում մարդկութեան: Յենվելով իր հատառի, իր աւանդութիւնների, իր պատմական յիշատակները վրայ, նա առանց անհայտ անբաւականութեան ու արտանջի կրում էր օտարի բռնաւոր լուծը: Նա կրում էր դրա բոլոր դաւնութիւններն ու թշուստութիւնները, նա կրում էր իր կեանքի բոլոր քայքայիչ հանգամանքները, բոլոր աւերիչ պայմանները:

Անցեալ դարու վերջերը հայերի մեջ սկսվում է հողի հայ նկատելի ձգտում դէպի ինքնաձեռնաշնորհիւն, որ նախ արտայայտվում է հետաքրքրութեամբ դէպի հայութեան անցեալը, դէպի նրա պատմութիւնը: Այս դարու սկիզբներն այդ ձգտումն առաւել որոշվում է: Ակրտած այդ ժամանակներից դոյն հետաքրքրութիւնը հայոց անցեալով հայերի մէջ աւելի աճում է և փոխաբերվում ուրիշ զգացումով. այն է՝ սէր և աւելի վերջը հպարտութիւն:

ու յափշտակութիւն դէպի իրենց նախնիքների պատմութիւնը: Այդ ժամանակամիջոցը մենք կարող ենք անուանել՝ էպոսա յափշտակութեան հայոց պատմութեամբ: Եւ յիշուալի, այդ ժամանակի ամենաբաւ հայ գրողների աշխարհիւնների մէջ հայոց պատմութեան մասին կամ նրանից քաղված նիւթեր են պարունակուում: Այդ ժամանակի առաջնակարգ խելքերն ուսումնասիրել են այդ պատմութիւնը, որն իր հերոսների հետ պատմարանի շրթնից իջնում են բանաստեղծի շրթները, բանաստեղծի ներդաշնակ տողերը, ձուլվելով այս կամ այն եղանակում, ընդհանրանում և թափանցում են ժողովրդի մէջ, որի յիշուածութիւնը վերանորոգում է վաղեմի ժամանակներից իրեն հասած պատմական յիշատակները, աւանդութիւնները, առասպելները: Այդպիսով ժամանակի ընթացքի շնորհով այդ բոլորը հայի սրտում յղայնում է ձգտում դէպի ազգային անկախ, ինքնուրոյն կեանք, որ նա նկատում է իր նախնիքների պատմութեան մէջ, որով նա այնչափ գրաււում է: Քանի գնում է, այդ ձգտումն աւելի որոշ կերպարանք է ստանում և հայի մէջ ցանկութիւն է ծագում վերականգնել ազգային անցեալ փառքն ու մեծութիւնը, ազգային անցեալ քաղաքական ինքնուրոյնութիւնը: Եւ ահա յայտնվում են հայ անհատներ, որոնք իրենց բնութեամբ ու մտաւոր կարողութեամբ ընդհանրութիւնից բարձր են կանգնած լինում, և սկսում են բացատրել այդ ձգտումները: Այդ անհատների մէջ այն մութ ձրգտումներն արդէն յայտնվում են գիտակցական:

Բայց արդեօք իրաւ է, որ այդ նոր ձգտումները դէպի անկախութիւն, դէպի ինքնուրոյնութիւն արտայայտութիւններն են լոկ այն հանգամանքի, որ հայ հասարակութիւնը գրաւվեցաւ իր նախնիքների անցեալով, ցանկանալով նրանցից օրինակ վերցնել նրանց «արժանի գաւառը լինել»: Արդեօք իրաւ է, որ հայ հասարակութեան մէջ այդ ձգտումներն առաջացան լոկ նրա վերացական հայեցողութեան շնորհով հայոց պատմութեան վրայ, որի փաստաբարութիւնը կարմրացրեց այս դարուս հային սրաստրուկ լինելուն համար և այդ նախատինքը խիստ նրա գէմբին, իրրև միակ արժանի վարձատրութիւն նրախախտութեան ու գերութեան համար: Արդեօք այդ ձգտումները շտնէին ուրիշ ազգիւր, որը յենված էր հայ ժողովրդի տւելի իրական ինտելեկտների վրայ: Արդեօք այդ ձրգտումներն միակ արտագրոյն ու հիմքը հայ ժողովրդի կենսական հանգամանքները չէին, նրա հասարակական ընդհանուր կացութեան պայմանները չէին: Արդեօք այն ձգտումներն իսկապէս շժպեցան ու անելի սարգացան նրա կեանքի քաղաքական ու սոցիալ-անտեսական անտանելի պայմանների շնորհով, և չէ՞ որ գրան կից հայոց սրտմութիւնը լոկ այն դերն էր կատարում, որ հայի սրտում միայն փառ էր պահում այն ձգտումները: Արդեօք այն ձգտումներն իսկապէս սրղիւնք չէին կեանքի լիակողմանի բարբութեան ու դարգայման ծարախի: Մեր համոզումն է այդ, և հայը քանկելով ու քայքայվելով իր ներկոյ հասարակական պայմանների շնորհով, ձգտում է դէպի սոցիալական ու անտեսական բարեկեցութիւն,

ձգտում է դէպի կենսական կերպերի արմատական կերպաբանախոխութիւն, ընդունակ նրան տալու հասարակական կազմակերպութեան այնպիսի պայմաններ, որոնք նարատաւոր ու նպատակայարմար լինեն նրա առաջադիմական ձգտումների աջողութեան համար: Այդ ձգտումների աջողութիւնը և ուրեմն իր փրկութիւնը հայը տեսնում է անկախութեան մէջ, ինքնուրոյնութեան մէջ: Բնական օրէնքի հիման վրայ պատերազմելով հայի բոլոր հասարակական ձգտումներն անխափոււ են մի լայն, մէկ ընդարձակ և ընդհանուր ձգտման մէջ, նա ձգտում է դէպի քաղաքական ադատութիւն և ազգային անկախութիւն:

Կերկացում հայ ժողովրդային ընդհանրութեան մէջ այդ ձգտումը որտե ու գիտակցական կերպարանք դեռ չէ ընդունել: Հէնց նոյն իսկ հայ ինտելլիգենտ հասարակութեան մէջ այդ ձգտումը դեռ չէ ընդունել զրական զիրք, դեռ չէ արձակել արմատներ նրա մէջ և դեռ չէ դարձել այնչափի գիտակցական ձգտում, որ նրա հասարակական զործողութիւնների գլխաւոր, եթէ ոչ միակ, թելադրանքն ու շարժախիթը յայտնվէ: Բայց Հէնց նրանումն է կայանում տաղանդների մի տեսակի իսկական կոչումը, որ հաղի նկատելի նորածագ երեոյթը հասարակական կեանքում, որ դեռ մութ կիրպով զրում է ժողովրդային ընդհանրութիւնը և ինտելլիգենտ հասարակութեան մէջ: Էլ դեռ չէ դարձել լիովին գիտակցական, ինքը տաղանդը իրրև գիտող, իրրև նուրը հաստութիւն ունեցող, առաջիկան է նկատում, քննում այդ երեոյթը և եթէ նա վիպասան է՝ այդ երեոյթը գնում կենսական յայտնի կացութիւնների մէջ, առաջ ըրրում գործող անձեր և այդպիսով այն երեոյթը կեանքի վիբրածում: Բայց դեռ քաւական չէ, որ տաղանդն ընդհանրապէս առաջինն է նկատում յայտնի հասարակական երեոյթ և նրան կեանքի վերածում, տաղանդի կամքից չէ կախված այդ հասարակական երեոյթն այս կամ այն կեանքի վերածել, միայն թէ որ և է կեանքի վերածած լինի: Տաղանդն այն երեոյթն այնպիսի կեանքի պիտի վերածէ, որը համարատասխան լինի զոյն երեոյթի բնաւորութեան ու ողուն, որը եթէ ոչ ճշտութիւն, զոնէ ունենայ մեծ հաւանականութիւն, որ այն երեոյթն այդպիսի գործողութիւններով պիտի կատարվէ, իրականութիւն ստանայ տաւելի կամ պակաս մոտ ապագայում: Կանանապէս տաղանդի կամքից չէ կախված իր նկարագրած կեանքի գործող անձերին տալ այս կամ այն ախղը, որն իրեն հեղինակին տաւել հաւանելի է: Այդ երկու դէպքումն էլ նըրա նկարագրած կեանքն իր գործող անձերով կեղծ, նըրա սեփական քէֆով ձեւած ու կարկտած կհանդիսանայ չի ունենալ ուլին իրական, ուլինք բեւալական, և ոչ մի այն այդ, այլ և չի ունենալ նոյն երեոյթի բնաւորութեան ու ողուն համապատասխան նպատակայարմարութիւն: Այդ դէպքում գրողը չէ կատարում տաղանդի իսկական կոչումն: Երբ որ մի հաղի նշմարելոյ նորածագ հասարակական երեոյթ գրողը կեանքի է վերածում, ստիտփելով նրան գործողութիւնների մէջ, սրանց գործող անձե-

րով այդ ամբողջ կեանքի իմաստն, էութիւնն ու նպատակը նա պէտք է հետեցնէ այն երեւոյթի մտքից ու նշանակութիւնից, նա պէտք է հաստատարիմ մնայ այն երեւոյթի բնատրութեան ու սղուն, նրա կենսական ճամար տութեան:

Եթէ տաղանդաւոր գրողը հասարակութիւնից առաջ է նկատում որ և է նորայայտ հասարակական երեւոյթ, դա ազատագրանում է նրա հետաուստեան թեան ու գիտութեան շնորհք, դա ազատագրանում է նրա հաստատութեան նրբութիւնն ու զգայունութիւնը. դա ազատացու նում է, եթէ կուզէք, այս կամ այն տաղանդի առանձնայատկութիւնը, որ կարող է և սրբաուստեանցիչ յաս կութիւն շինել իւրաքանչիւր տաղանդի համար: Բայց բնական չէ եթէ տաղանդաւոր գրողը հասարակութիւնից առաջ է նկատում որ և է նորայայտ հասարակական երեւոյթ և այգուհետ նրան կեանքի վերածում, — տաղանդի գլխաւոր արժանաւորութիւններից մէկն էլ այն է, որ նա սահմանափակ ու միակողմանի կերպով շրջադարձէ այն նորածագ երեւոյթը, այլ գիտէ ու քննէ նրան բազմակողմանի կերպով և զանազան տեսակէտներէր: Երեւոյթի այդպիսի քննութեամբ գրողն աւելի մեծ ծառայութիւն է մատուցանում հասարակութեանը, որի աչքին այդպիսով առաւել պարզորոշ կերպով է նկարարագրում գալիք երեւոյթի բնատրութիւնն ու ոգին: Բայց մի յայտնի գրական գրուածքի հասարակական նշանակութիւնն այդ վնեւով, նա պէտք է ունենայ և գրական արժանաւորութիւններ: Գրական գրուածքի նկարչական ձեւն ու կերպը, մտքերի ու զգացումների խորութիւնը, հարցադրի տաւել կամ սրկասս զօրութիւնն ազատացչ է ազանդի աստիճանի առաւել կամ սրկասս բարձրութեանը, մեծութեանը, և միայն հարկաւոր է որչեւ թէ այս կամ այն տաղանդը մինչև որ աստիճանն աւել է այդ յատկութիւնների և այդպիսով ապ նրան և նրա՛ գրուածքներին պատշաճ տեղը գրականութեան մէջ: Սակայն երկու տեսակէտից էլ, — այսինքն տաղանդի ու սրա գրական գրուածքի հասարակական և գրական նշանակութիւնների տեսակէտներից էլ, — գրական տաղանդից անապ ման կերպով պահանջում է կենսական ու մարդկային ճամարտութիւն նրա նկարագրած կեանքում:

Վարժաւանական թւականներից փոքր ինչ առաջ հայոց գրականութեան մէջ մէկ արտասովոր երեւոյթ յայտնվեցաւ. լոյս տեսաւ «Վէլքը Հայաստանի»-ն: Գրված ժողովրդական բարբառով, իր բոլոր սրբագութեամբ ու ջերմութեամբ, իր ոճի անկեղծութեամբ ու զգացումների եռանդով և վերջապէս այն հասարակական հարցերով որ նա ախատում էր յարուցանել ու վճել — այդ գիրքըն ազատագրանում էր նրա հեղինակի անզուգական խելքն ու տաղանդը: Նրա յարուցած կամ առաջացրած հասարակական հարցերն ամենայնորոշ հարցեր էին ընդհանուր հայութեան՝ համար և մինչև այսօր էլ չեն գաղարում նայել ինեւ և չեն էլ գաղարել, մինչև որ հայութեան ինքնուրոյնութեան զաղափարը, որ այն գրուածքի

մայրումի տքն է, շիրագործվէ հայոց երկրում: Հայերի հասարակական կեանքում այդ նորայայտ զաղափարը և այդ զեւ շատ մութ ձգտումը ճշտութեամբ նկատել էր Խ. Աբովմանցը և ինքը ժողովրդի գաւակ ժողովրդական բարբառով կենդանութիւն տուել այդ նորածագ երեւոյթին, այդ մութ ձգտման, այդ մեծ զաղափարին: Ս. Նազարեանցը և Ն. Նալբանդեանցն այդ ձգտման հիմքն աւելի հաստատում են հայութեան հոգի վրայ, և գնում աւելի առաջ: Նրանք, — առաջինը գլխաւորապէս մտաւոր (intellectuelle) տեսակէտից, իսկ երկրորդը գլխաւորապէս քաղաքական տեսակէտից, — արձարձեցին այդ ձգտման միտքն ու նշանակութիւնը, տուին նրան յայտնի ուղղութիւն, որը քանի գնում էր, այնքան ուրիշ նոր գործիչների շնորհով աւելի ձեւականութիւն էր ստանում, աւելի առանձնանում, հետեցնելով իրենից այնպիսի հարցեր, որոնք կեղծ հայրենասէրների ձեռքին զէնք դարձան հէնց նոյն իսկ ընդդէմ վերոյիշած ձգտման: Մհա հէնց այստեղ մեր յանդիման յայտնվում է Բաֆֆին իր զխաղ աչքով և իր լուրջ տաղանդով: Հասարակական ձգտումները, որ ուրիշ գրողներ նրանից առաջ են նկատել, գաւում են Բաֆֆիի գրական ախատութիւնների շարժանքին ու հիմնադրաւոր: Նա սկսում է քրքրել այդ երեւոյթներն աւելի բազմակողմանի տեսակէտից և որոշ զաղափարներն ու հայեացքներն ներդաշնակութեամբ: Սկսում են նրա մի շարք վէպերը, որոնց մէջ նա նախ որոնում է հայերի հասարակական ձգտումների բուն պատճառները: Սյգ ձգտումներն են, ասացինք, ունենալ հասարակական ինքնուրոյն, անկասկեանք: Սյգ ձգտումների բուն պատճառն ու շարժանքը Բաֆֆին համարում է «վայրենի բանակալութեան լուծը», այսինքն այն հասարակական կազմակերպութիւնը, որին այսօր հայութիւնը գոհ է: Սյգ միտքը մայրումի տքն է Բաֆֆիի այն գրականների, որոնց նա նուիրել է հայերի քաղաքական ստրկութեան հարցին: Սյգ գրութիւններն են «Կառիթ բէկ», «Թեթը», «Ճալալեղգին», «Էպոսներ», որոնք նրա ամենալաւ ախատութիւններն են, և ուրիշներ... Բայց հայութեան ընդհանուր թշուառութեան պատճառը տեսնելով «վայրենի բանակալութեան լուծը», հասարակական կացութեան փտած ու վնասակար պայմանները, — Բաֆֆին ինչ գարման է ցոյց տալիս այդ թշուառութիւնը կողմերու. ինչ միջոց է նա առաջարկում գործադրել այդ հասարակական փտած պայմանները բարձրորակի համար. հայութեանն որ տարրերի վրայ է նա մասնանիչ անում, իրրե վնասակար հայութեան վել ամնութեան գործի համար. և վերջապէս հայութեանն որ տարրերի վրայ է նա մասնացոյց անում, իրրե վերանորոյնչ հայ ժողովրդի հասարակական կեանքի պայմանների, իրրե ջատագով հայ ժողովրդի քաղաքացիական ու մարդկային իրաւունքների ու զոյութեան: Մհա այդ հարցերի ստատախաններումն է Բաֆֆին հանդիսանում իր տաղանդի իսկական կոչման մէջ, իր հասարակական գործիչի ճամարիս սրտակերում, հայութեանը ստատուած իր նշանաւոր ու արդիւնաւոր ծառայութեան սղ փայլով ու

Ի շանակութեամբ:

Չ.

(Կշարունակէ)

ԷՐԶՐՈՒՄԻ ԳՐԱՒԵԱՆ ԼՈՒՐԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Վերջերս եւրոպական լրագիրներում հրատարակվեցաւ մի հեռագիր Ս. Պետերբուրգից հետեւալ բովանդակութեամբ. «Լուրեր կան, որ սուսայ կառավարութիւնը մտադրութիւն ունի գրաւելու Էրզրումը, իբրև երաշխարութիւն Թիւրքիայի պարտքերի հատուցման» Թէ որքան ճիշտ են այդ լուրերը — դժուար է ստուգել. գուցէ կարճ ժամանակամիջոցում հրատարակվեն հեռագիրներ, որոնք կամ կհաստատեն և կամ կհերքեն այդ լուրերը: Բայց եթէ այդ լուրերի հաստատումը մինչև մի յայտնի աստիճան կպարզէ սուսայ քաղաքականութեան դիտումները և կորոշէ նրա կողմնակիցների ու հակաակորդների անելիքը, այլ ընդհակառակն, այդ լուրերի հերքումը հանգստացնող ազդեցութիւն չի ունենար, այլ աւելի ստուար քողով կծածէ: Բայց սրբեւիտան քաղաքականութեան նպատակները, քանի որ աչքն ընկնող կէտն այն է, որ այդպիսի լուրեր տեղի են ունենում. «ասանց կրակի ծուխ չէ վնում»: Տակաւն այդ լուրերից առաջ Ռուսաստանն իր Կ. Պոլսի գետաւանի միջոցով Բ. Գրանը յիշեցրեց սրա պարտքերի մասին: Հէնց այդ ժամանակներն էլ Թիւրք կառավարութեանը կրկնապատկեց շատ հարկեր Հայաստանում: Սոյ գոյրն ապացուցանում է Թիւրքիայի ֆինանսական ստատիկ ճորչումումը և Ռուսաստանի քաղաքական գիտաւորութիւնները Թիւրքաց Հայաստանի վերաբերութեամբ, իբրև ճանապարհ դէպի Կ. Պոլսի:

Թիւրքիայի պարտքերի հատուցման պահանջումը Ռուսաստանի կողմից լոկ մի պարտուակ է իբաւումը ունենալու համար Թիւրքիայից պահանջելու «բարենորոգի» (°) բոլգարական զորքերը և այնուհետև աճող բազմին իրազորակը իր դիտումները Հայաստանի նկատումով: Վաղ թէ ուշ Ռուսաստանը զարձեալ առիթ կգտնէ կրկնելու իր պահանջը Թիւրքիային սրա պարտքերի հատուցման մասին, և թերևս համարձակութիւն ասանէ պարտքերի փոխարէն Հայաստանի հարեան գաւառները պահանջել: Երկուսի պահանջի լուրջ ու յամուտ կրկնութիւնները կարող են վերջապէս առաջացնել Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ արխիւազաղաց ընդհարում, այն տեսակէտից, որ այնպիսի կրկնութիւններով չօշափված կլինեն և եւրոպական սրբի տերութիւնների իրար հակառակող շահերը Թիւրքիայի վերաբերութեամբ:

Այս բոլոր կէտերը հէնց այժմից ստիպողական կերպով պէտք է գրաւեն հայերի ազազրութիւնը դէպի Երևնց հարազատ երկրի ու ժողովրդի ճակատագիրը:

Եթէ այն երկու պետութիւնների մէջ սկսվէ պատերազմ և յանկարծակի կերպով վրայհասնէ մեզ վրայ, անպատրաստ գտնելով մեզի ընդդիմադրելու համար պատերազմական ազէաներին մի կողմից և հայ ժողովրդական գնոր պաշտպանելու համար միւս կողմից, — մեր

Թշուառ հայրենիքում զարձեալ կնորոգվին 77 թ. պատերազմի ազէաները: Սոյ հանդամներն աչքի առջև ունենալով թնչ պարտականութիւն է ճանրանում մեզ վրայ, թնչ ճանապարհ է յայցում մեր առջև և թնչ զարտարում ու նպատակով պիտի զեկավարվենք մենք այդ ճանապարհի վրայ սոր կոխելիս:

Մի պատերազմ Թիւրքիայի և Ռուսաստանի մէջ հայերիս համար պէտք է լինի ամենայրամար բազէն դրդելու ու բարձրացնելու հայ ժողովրդին թշնամիների դէմ, ձգտելով օգտվել այդ բազէնց ձեռք բերելու համար հայրենիքի ու ժողովրդի ազատութիւնը: Համանման պարագաներում բոլգարական ժողովրդի ապստամբական զործուցութիւնների աջողութիւնը թող լինի մեզ քրինակ ու քաջաւեր: Ասկայն անկարելի է հայերիս համար իրազորակել այդպիսի լայն ու մեծ նախագիծ, եթէ կանխապէս մենք չպատրաստենք թէ ինակլիլկէնա և թէ ժողովրդային ապստամբական ոյժեր այդ նպատակին ճառակելու համար: Բայց վերոյիշած երկու տերութիւնների մէջ ձգված պատերազմի ժամանակ մեր նպատակները իրազորակելու համար եթէ զլիսուորն ու անհրաժեշտն է մեզ ունենալ կազմակերպված ապստամբական ոյժեր, սակայն դա զեւ բոլորը չէ: Մի կազմակերպութեան զործունէութիւն, որ ձգտում է իրազորակել մի յայտնի նպատակ, առանց որոշ ուղղութեան և կանխապէս որոշած ա ա կ տ ի կ ա յ ի (tactique) կարող է յայտնվել երկասարի սուր: Հարկաւոր է այդ կազմակերպված ոյժերին իրենց զործողութիւնների ժամանակ սկզբից մինչև վերջ առ մի որոշ ու բացառիկ դիրք իր երկու թշնամիների, մի կողմից՝ սուսի, միւս կողմից՝ Թիւրքի, վերաբերութեամբ, որոնց հանդէպ ինքը կլինի երրորդ հակառակորդը: Հարկաւոր է ունենալ զործունէութեան որոշ նախագիծ, որը կարողանայ ապստամբական ոյժերի զործուցութիւնները գնել այնպիսի հողի վրայ, որ բացայայտ կերպով որոշելով նրանց բնուորութիւնը, այնպիսի ճորչումով դէպի ինքնուրոյնութիւն, — այն այժմից չգտանան զործէք իրենց երկու մեծ թշնամիներից որ և է մեզի ձեռքին՝ ուղղված դէպի երկրորդ թշնամին: Հարկաւոր է ունենալ զործունէութեան որոշ ուղղութիւն ու ճրագիր, որ կարող լինի մեզ հասցնել մեր նպատակին, որով և ափտի զեկավարվեն մեր ապստամբական զործողութիւնները:

Մեր նպատակը լինելով յանուն յիակոզմանի առաջադիմութեան ու զարգացման ձեռք բերել հայրենիքի ու ժողովրդի ազատութիւնը, — սուր Թիւրքական պատերազմի ժամանակ մեր բոլոր զործողութիւնները պիտի ճառայեն այդ նպատակին և միմիայն այդ նպատակին. հետեւորար այդ զործողութիւնները միաժամանակ պիտի լինեն ընդդէմ թէ՛ Ռուսաստանի և թէ՛ Թիւրքիայի: Մենք խօշենք ձգտում մի բնապետութիւնից ազատվելու՝ այնուհետև մէկ ուրիշ բնապետութեան ճիրանները նետվելու համար: Մենք պէտք է անխախտելի ունենանք այն համոզումը, որ բնապետութիւնը, սր որ էլ նա լինի, միշտ արդէր է ամեն առաջադիմութեան ու զարգացման և պատճառընդհանուր գերութեան, ստրկութեան: Բայց միթէ մենք

մէկի սարկական լծից ձգտում ենք ազատվել մէկ ուրիշ լծի տակ ստրկութիւն վայելելու համար... Եւ այն բըթամիտ տղէաները, որոնք մազի շափ հասկացողութիւն չունենալով սուսաձայերի զրութեան և սուսաց կառավարութեան մասին, յանդգնում են ամենայն անամօթութեամբ, անխճմտանք կերպով հրապարակապէս քարոզել թիւրքաձայ միամիտ ու սձաս շրջաններին՝ "աղաչել" Ռուսաստանին ազատել հային թիւրքաձայ լծից և սուսել նրան իր զիրկը, սպասելով հիւսիսային միապետից ամենայն բարօրութիւն, սպասելով նրանից հայութեան ազատութիւնը, — նրանք, այն իմաստակ տգէտները, իրենց այդպիսի վեասակար քարոզներով անբարոյականութիւն են սերմանում սուսնց այն էլ անբարոյականացած թիւրքաձայ շրջաններում. նրանք իրենց դատարկ քարոզներով յանցանք գործել են սովորեցնում սուսնց այն էլ ժողովրդի վերաբերութեամբ յանցաւոր թիւրքաձայ շրջաններին, որոնք պատրաստ են ամենակեղտոտ ու անհեթեթ քայլեր անել միայն թէ իրենց աժան նստէ, մի այն թէ այդ իրենց կաշիին շղիւզէ. որոնք, ինչպէս ետ նեալ աղքատ, իւրաքանչիւր թշուառականի սոճն, իւրաքանչիւր առիթին՝ ստաքաստ են շղղորթել ստրկանալ պաղատել, մուրալ վարք — ինչ հանգիստ, գուրկ լինելով իրենք պատաճանաչութեան, անձնասիրութեան, համարձակութեան, ազնուութեան զգացումներից՝ գուրկ լինելով իրենք մտաւոր ու բարոյական հիմքից ու կարողութիւնից. որոնք ստաքաստ են այդպիսի ստորութիւններով ու տխմարութիւններով ցածայնել, հողին հասարեցը նել ամբողջ ազգի արձանաւորութիւնը, անուներ, պատիւր... Ինչով են նրանք ձեռք բերել այդ իրաւունքը... Ազգին "ճառայելով" արգեօք, ինչպէս սիրում են իրենք սակ... Ահ, ողորմելիներ, իննցէք ուրեմն, որ "տխմարի ճառայութիւնը թշնամու ախած հարուածից էլ վտանգաւոր է":

Մեր նպատակն է — ջնջել ամենայն արգելք ազատ առաջագիւլու ու զարգանալու համար կթէ այդ զբժուարին արգելքը թիւրքաց բռնապետութիւնն է հայութեան մեծամասնութեան՝ սցսինքն թիւրքաձայերի համար, նոյնպէս է և սուսաց բռնապետութիւնը սուսաձայերի համար և նոյնպէս էլ կլինի թիւրքաձայերի համար, եթէ սրանք մէկ օր զժրողութիւն ունենան յօժարակամ կամ տկամայ ընկնել Ռուսաստանի կեղերից ձիրպնները: Կրան հաստատութիւն՝ սուսաձայերի ընդհանուր աննախանձելի գրութիւնը, որ միայն կոչերին նկատելի չէ, և որի մասին չեն խօսում, և որի գէմ չեն յարձակվում միմիայն նրանք, որոնց վախկոտութիւնը և կամ շահն այդ չէ ներում. գրան հաստատութիւն այն, որ նոյն իսկ իրենք սուսները խիստ զձգոճ են իրենց դասն վիճակից ու կառավարութիւնից և այդ զձգոճութիւնն իսկ ասաջացրել է սոսկալից ու նշանաւոր պատերազմը, որ երկուր տարին երի ընթացքում մըղում են բիւրաւոր սուս յեղափոխականներ իրենց կառավարութեան գէմ, և ժողովրդի բարօրութեան համար նրանց թախած արիւնք, նրանց կոչքրած կեանքը մինչև

այժմ գեւ չէ յազեցրել մորեզին առջի վայրենի ծարուր:

Մեզ միապէս տոնելի են որպէս թիւրքաց կայսրն ու բռնապետական կառավարութիւնը, նոյնպէս և սուսաց Մեզ միապէս տոնելի են թագաւորներն ու բռնապետական կառավարութիւնները միշտ և ամեն տեղ, լինեն նըրանք օտարի և կամ թէ նոյն իսկ մեր՝ հայերի: Պատերազմը, որ պէտք է մղենք յանուն հայրենիքի ու ժողովրդի ազատութեան ու բարօրութեան, պէտք է շարունակվի մինչև այն կէտը, երբ ամբողջ ժողովրդի ձայնն ու կամքը, երբ ժողովրդային զեկավարութիւնը կառանայ հիմքը հասարակական ընդհանուր կազմակերպութեան Հայաստանում: Պէտք է մղենք այն պատերազմը նոյն իսկ հայ իշխանի կամ թագաւորի, այդ անհատական կառավարութիւնների, և հայ բռնապետութեան գէմ, եթէ դրանք, տարաբաղդաւոր, զոյութիւն ունենան մեր մէջ ապագայում: Պէտք է վերանան անհատական կառավարութիւնները, տեղ տալով հանրային կառավարութեան, միակ հաստատ հիմքն ընդհանուր զարգացման և ընդհանուր լիակողմանի բարօրութեան համար:

Իսկ որ և է պատերազմ մղած այս կամ այն օտար պետութեամբ թիւրքաձայի գէմ, յարմար րօպէ կլինի մեզ համար մեր նօրատակն իրաւործելու, միակերպ գորութեամբ յետ հրելով ու հարուածելով ինչպէս թիւրք պետութեանը, նոյնպէս և ամեն մէկ օտար տէրութեան, որ գրաւորութիւն կունենայ մեզ զբաւել իր զիրկը:

Կ'ս պէտք է լինի մեր նշանարանը, զեկավարը և զործը, եթէ մենք անկեղծարար բղձում ենք հայ ժողովրդի հանգիստն ու բարօրութիւնը:

ՆԱՄՔԿ ԹԻՖԼԻՍԻՑ

7 Մայիս, 88

Նախ քան յայտնել մի քանի խորհրդածութիւններ հայոց եկեղեցու մասին, որ օրուայ խնդիր է, ես կուգէի տակ երէտ խօսք "Նշակի" մասին, որ ցանկալի կլինէր տարագրելը: "Նշակը" յայտնվելով իր վրայ զարձրեց հանրային ու շաղթութիւնը. իւրաքանչիւր հային նկատելի էր, որ "Նշակը" բացառիկ երե ոյթ է մեր յարգութեան մէջ, իբրև հային տեղալ կառավարութիւնների գէմ միակ լուրջ կանուսուր ընդգիւնդարական օրգան, որ իբրև հիմք իրեն կարող էր գանել միմիայն անօրինական (illegale) հողը: Բայց նրա թողած ազատութիւնն ամեն հայ շրջաններում մի և նոյնը էր: Պանդեցան իմաստասիրներ, որոնք թերթերում յարձակվեցան "Նշակի" գէմ, սասանց խզծի խայթի, սուսնց մտաձեյու, որ գրանով նրանք խեղապէս յարձակվում էին ոչ թէ "Նշակի" գէմ, այլ հայ հասարակութեան լուսազոյն մտալի գէմ, որ ձգտում է գէպի ժողովրդի բարօրութիւն ու ազատութիւն, ձգտում, որի արտայայտչն է յայտնվում "Նշակ" կր. նրանք չհասկացան, որ զրանով յարձակվում էին ազատութեան մեծ զաղափարի գէմ, որի բարողին է հանդիսանում "Նշակը": Խեղճիւր շղիւզէին, որ իրենց բորբոքված կրքերը յազեցնելու համար նրանք տեղ սրաքք կին գործում... Միւսներին, թոյլերին ու ետակրներին, "Նշակն" իր սրչ ուղղութեամբ շատ յանդուգն թւաց: Հարցերին սուր ու օրոք կերպարանք տալը, նրանց հիմք գնելով գիտութիւնը և արամարանութիւնը. բոցարձակ ու արմատական վճիռներն այդ հարցերի, կանոնաւոր հեան սրութեամբ գա

զայններով իր հայեանքները, իր գաղափարներն այն հարցե-
րի նկատմամբ. համարձակարար կոչելը հայութեան ա-
մենաբար ոյժերին զէպի սրտներազմ, — «Հնչակի» մէջ այդ
բոլորը նրանց, թոյլերին ու ետաւէրներին, ապշեցրեց և խո-
րատուզեց բթամիտ բուժեան մէջ:

Քայց որ խզմաններով ու հասկացող հայն այսօր կհամար
ձակով բացարձակ կերպով յարձակվել «նչակի» դէմ: Ան-
ցան արդէն այն ժամանակները, երբ հայերի մէջ աւանդ ա
մեթի կարողանում էին յարձակվել հայ ժողովրդի ազատու-
թեան գաղափարի և ձգտման դէմ. այդ գաղափարը, այդ
ձգտումն այսօր հայութեան կիանքի ամենաշխատ սր խնու-
տըն է: Կը հայ հասարակութեան լաւագոյնն ու թարմ ոյժե-
րը «Հնչակի» կողմն են և կզայ օրը, երբ գա կերեայ և
գործի մէջ:

Այնչենք երկրորդ կէտին:

Ազգն ընտրելով կաթողիկոսին, կարգում է նրան, իբրև
զուտ հոգևորականութեան, իբրև նրա ներկայացուցիչ օ-
տարի և հայի առջև, իբրև կոչված կարգադրելու բոլոր գոր-
ծերը, որ վերաբերում են այդ մարմնին: Արդէն նրանով որ
կաթողիկոսը չէ ն շ ա ն ա կ վ ու մ, այլ ընտրվում է ընդ
հանուր ձայնաուսութեամբ՝ ընտրված պատողամուտրների
միջոցով, արդէն գրանով կաթողիկոսական պաշտօնը հիմնը
ված է ժողովրդական ընտրողական սկզբունքի վրայ և ու-
րմն նրա գերն է հետևել հասարակական ձայնին, ժողովը
զի կամբին: Ապթողիկոսը երթալով հակառակ ժողովրդի
ձայնին և այն սկզբունքին, որ նրա պաշտօնի հիմնն է — ի-
րեն իւրացնում է իրաւունքներ, որ նրան չեն արված, բնու-
նում է ժողովրդի կանքի վրայ, յայտնվում է բնապետ:
Այդպիսի գեաքերին հենց ժողովրդի իրաւունքի հիմնն վը
բայ հասարակութիւնը կը ված է զրկելու բնապետ կաթո
ղիկոսին իր պաշտօնից:

Մակար կաթողիկոսը հանդիտանում է այգալիսի բնա-
պետներին կատարելատիպը: Հակառակ հասարակութեան
կամբին, հայոց գաղացները քանդելուց և սուսին յանձնե-
լուց յետոյ, Պէշիկթաշի խնդրում ազեղ դեր խաղալուց յի-
տայ, այժմ նա իր ձեռքով դիպում է հայոց եկեղեցուն, այն
եկեղեցուն, որի գոյութեան ու անկախութեան միակ հիմ-
նարարն է ընդհանուր ընտրողական սկզբունքը: Հրա գերի
տուս կատաւարութեան, Մակարը նրա ճնշման առկ ջանք է
անում կենտրոնականութիւն մայնել մեր եկեղեցու մերիան
կախութիւնը միշտ անբնաւարարելի եղել և գրանով նրան
գործնել գործիքն այն հրէշուս որ մեխանիզմի, որի կենտրոնը
ինկով հիւստիս մ, կեղերու մէ ողջ առաւայ կայարութիւնն
եր գանազան ազգերով, լեզուներով, կրօններով: Մակարը չէ
նմայում ոչ մի միջոց խաղալու ջնջելու ժողովրդի իրաւունք-
ները, ջանալով գրանց գցել կեղատա գրառումներով զեկամար
Հոգ մի խմբակի ձեռքովի պարագրուսը կլինեն ինքն ու սի-
տաղը: Մակարի ջորջով կենտրոնականութիւնը մանկով մեր
եկեղեցու ձոյքը, հիմնովին կպիւրանայ մեր միջեց ժողովրդա-
ան ընտրողական սկզբունքը: Քայց խորաբանչիւր հայ պի-
տի պաշտպանէ այդ ռամկապետական սկզբունքը: Մակարի
յրով սկսվում է մեր եկեղեցական պատմութեան մէջ մի նոր
էրա (ère): Այդ կաթողիկոսը մի ձեռով նորոգում է Պրիզոր
լուսաւորչի քար ու կիրից շինած եկեղեցին, խակ միւս ձե-
տով կեղերում ու խեղզում միս ու սակար ունեցող և կի գե-
ցին: Կամակս երկարեց. միւս անգամ Բաքի՞նի մասին:

ԿԱԹՈՍՅ
(Առատիկ)

Խորունկ մէկ անգունդ կայ երկրում մի իր աւա,

ժայտու լեռների մէջ ամբողջ ամիսովիւս .
Այնտեղ մերթ ամուկրն են զիղվում խրոխտարար,
Այնտեղ մերթ սուլում է քամին կատաղած,
Պայծառ օրուայ բոլոր գեա չէ թափանցել,
Խաւարն այնտեղից գեա բնաւ չէ հեռացել:

Այդ խուլ անդնդումը կաթսայ կայ մի սկայ,
Քրում մարդիկները կուտված իրար վրայ՝
Ոգրում են, տանջվում են և մահ են կանչում
Եւ մահն իր ուղջոյն է խեղցն նրանց բերում:
Տանջվում են, մեռնում նրանք այրող բոցերից,
Որ միշտ կարմրայնում են կաթսան մարդպից:

Գահիճ բռնապետն է մի մեծ թի ձեռին՝
Խառնում այդ մարդկանցին իրար մէջ ուժ գին...
Վատվում է խիստ բոցը, վատվում անպողար,
Տանջում է մարդկանցը, բախում նրանց խաղա .
Վատվում է նա ոչ թէ փայտով հասարակ,
Այլ գոհ են զրնում նրան կաշը, զինդ ու քաղաք . . .

Եւ բոցը գահիճը գարձեայ խառայնում,
Եւ գոհ ու գոտոց նա մարդկանց վրայ խնդում,
Ինդում ու երգում է այս երգ վայրենի . —
«Չրկանք մեծ, տանջանք ու նահատակութիւն
«Քանոն իմ փառքիս միշտ պիտի ձեզ լինի .
«Մեծ կայսրը՝ ես ինքրս, խակ ձեզ ստրկութիւն . . .

«Ենչոն էք ուզում գուք Աստուծոն ձեր տրտունջ,
«Ղարուկ գուք ծրեվի էք՝ կրմնաք իմ ծառան,
«Եւ ձեր խակ ջանքովը մարմնից ձեր անչանչ
«Ես պիտ կանդնեցնեմ ինձ մի վեհ մահարձան . . .»
Գահիճ-բռնապետն այսպէս միշտ երգում
Եւ բոցը գարձեայ ու գարձեայ ստատեայնում . . .

Մահու ազելխարչ նա սեւերով կրնախոյնին
Հնձում է արտերը, Հնձում հարատու թիւն
Եւ զոհ է բերում գրանց ազազ այն բոցին .
Վատվում է խիստ բոցը, վատվում օրնիրան,
Կաթսան կարմրայնում է, մարդկանց շարչարում,
Գահիճ-բռնապետն էլ նայում ու խնդում . . .

Նրա շարժը կանգնած են իր հյու ծառաներ,
Գողով կատարում են նրա խիստ հրամաններ,
Ուզում են գահճին նրանք խօսքեր շարքարթ,
Իբրև գեաուններ նրա տաներն էլ լիզում,
Եւ բոցն էլ մեծցնում են սրտով անտանթ,
Եւ վատ այն գահճին էլ նրանք միշտ խնկարկում . . .

Քայց խիստ ստորացած ու կարմրած՝ մեծ կաթսան
Մէկ օր ձայնեցաւ ու կզան բիւր վրանք,
Արեան լայն գետերըն առտա կազմիկցան,
Երկաթ, հուր, օրնաք բերին գարհուրանք . —
Մարտից փրկվածներըն ազան՝ եզան գոհ,
Որ խեղճ գահերի հետ գահճն էլ գնաց գոհ:

ՎՐԻՊՈՒԿ. — Այն համարի էջ 2 ա. սխառակի 17-րդ
ստորում «պէտք է», բառը կարգաւ պէտք է յ ա գ թ է:

Լծուծն. Հայկական ազատ ստորաբան: